No. 406/14A

The Embassy of the United States of America in the Republic of Armenia presents its compliments to the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia and has the honor to invite the Government of Armenia (GoAM) to participate in an Exercise Review and Planning meeting for the 2015 Armenia-Georgia Joint Cross-Border Table Top Exercise (TTX) and Field Training Exercise (FTX).

The proposed exercises would be led by GoAM and Government of Georgia (GoG) counterparts. The U.S. Government (USG) will assist by providing experts and the appropriate logistics/equipment funding to support TTX/FTX planning and execution. The primary objectives of the TTX and FTX are:

- Demonstrate operational proficiency of USG-provided capabilities on the green border and at border Points of Entry.

- Evaluate and strengthen border security related radioactive material interdiction and response capabilities: detection, interdiction, identification, securing, transporting, etc.
- Strengthen regional border security relationships between Armenia and Georgia.

The Exercise Review and Planning meeting is planned to be held on 10-12 December 2014 in Tbilisi, Georgia (December 9 and 13 will be travel dates). Participation in the meeting will include representatives from USG, GoAM and GoG. The meeting objective is to review together with the Georgian counterparts the TTX/FTX purpose, objectives, scenario and timeframe drafted during the 6-8 October 2014 meeting in Yerevan to further advance the development of the exercise and to coordinate the necessary planning. The draft Exercise Concept Paper developed during the October meeting is attached.

The Embassy has the honor to request that the Ministry of Foreign Affairs provide the names of 12 GoAM officials: from the National Security Service (1), the Border Guard Troops (3), the Ministry of Finance- Customs Service(3), the Police (1), the Ministry of Foreign Affairs (1), the Ministry of Defense (2), and the Armenian Nuclear Regulatory Authority (1)to attend the meeting in Tbilisi by Monday, October 27, 2014, as well as provide other information required in the attached "Participant Personal Information Form". The meeting attendees should represent the agencies responsible for border security or radioactive material incident management in Armenia.

Questions regarding this event can be directed to MAJ Erik Larsen, Chief, DTRO-Yerevan, at (010) 49-40-34 or (055) 05-39-98; to Michael Seguin, Advisor, EXBS at (010)49-43-45 or (055)10-03-19; to Susanna Yeghiazaryan, Program Assistant, DTRO-Yerevan, at (010) 49-40-35 or (055) 05-62-91; or to Armen Tovmasyan, Program Assistant, EXBS at (010) 49-43-65 or (095) 20-24-95.

The U.S. Embassy takes this opportunity to renew to the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia the assurances of its highest consideration.

Embassy of the United States of America,

Yerevan, October 15, 2014.

No. 406/14A

Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունն իր հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը և պատիվ ունի հրավիրելու Հայաստանի կառավարությանը՝ մասնակցելու Հայաստանի և Վրաստանի համատեղ, 2015թ-ին նախատեսվող միջսահմանային շտաբային և դաշտային վարժանքների վերանայման ու պլանավորման հանդիպմանը:

Առաջարկվող համատեղ միջսահմանային վարժանքները կիրականացվեն հայ և վրացի գործընկերների անմիջական ղեկավարությամբ: ԱՄՆ կառավարությունը միայն կօժանդակի փորձագետների տրամադրմամբ և կֆինանսավորի վարժանքների պլանավորման ու անցկացման համար անհրաժեշտ լոգիստիկան և սարքավորումները:

Վարժանքների հիմնական նպատակն է՝

- Ցուցադրել ԱՄՆ կառավարության կողմից տրամադրված կարողությունների շնորհիվ ձեռք բերված օպերատիվ հմտությունները կանաչ սահմանում և սահմանային անցակետերում:
- Գնահատել և հզորացնել սահմանային անվտանգությանն ուղղված ռադիոակտիվ նյութերի կանխարգելման ու արձագանքման կարողությունները՝ հայտնաբերում, կանխարգելում, տիպաճանաչում, անվտանգության ապահովում, փոխադրում, և այլն:
- Ամրացնել սահմանային անվտանգությանն ուղղված տարածաշրջանային փոխհարաբերությունները Հայաստանի և Վրաստանի միջև:

Վարժանքների վերանայման ու պլանավորման հանդիպումը նախատեսվում է անցկացնել ս.թ. դեկտեմբերի 10-12-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում: Դեկտեմբերի 9-ը կլինի մեկնման, իսկ դեկտեմբերի 13-ը՝ վերադարձի օրը: Հանդիպմանը կմասնակցեն ԱՄՆ, ՀՀ և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչները: Հանդիպման նպատակն է վրացի գործընկերների հետ համատեղ վերանայել ս.թ. հոկտեմբերի 6-8-ը Երևանում կայացած հանդիպման ընթացքում մշակված Համատեղ վարժանքի

հայեցակարգի նախագիծը՝ այն հետագա լրամշակման և վարժանքի պլանավորման համար: Հայեցակարգի նախագիծը կցված է:

Դեսպանությունը պատիվ ունի խնդրելու Արտաքին գործերի նախարարությանը՝ տրամադրել հանդիպմանը մասնակցելու հրավիրվող 12 պաշտոնյաների անունները (Ազգային անվտանգության ծառայություն-1, ԱԱԾ Սահմանապահ զորքեր-3, Ֆինանսների նախարարության Մաքսային ծառայություն -3, Ոստիկանություն -1, Արտգործնախարարություն – 1, Պաշտպանության նախարարություն -2, Միջուկային անվտանգության պետական կոմիտե-1), ինչպես նաև տեղեկություն նրանց վերաբերյալ՝ ըստ կցված Մասնակիցների անձնական տվյալների տրամադրման ձևի մինչև երկուշաբթի՝ հոկտեմբերի 27-ը: Հանդիպման մասնակիցները պետք է ներկայացնեն այն գերատեսչությունները, որոնք պատասխանատու են սահմանային անվտանգության կամ ռադիոակտիվ նյութերի միջադեպերի կառավարման համար:

Միջոցառման վերաբերյալ հարցերը կարող եք ուղղել ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի Վտանգների նվազեցման գործակալության հայաստանյան գրասենյակի ղեկավար մայոր Էրիկ Լարսենին՝ (010) 49-40-34, (055) 05-39-98 հեռախոսահամարներով, ծրագրերի օգնական Սուսաննա Եղիազարյանին (010) 49-40-35, (055) 05-62-91 հեռախոսահամարներով, ԱՄՆ պետքարտուղարության Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության ծրագրի ղեկավար Մայքլ Սեգուինին (010)49-43-45, (055)10-03-19 հեռախոսահամարներով և նույն ծրագրի օգնական Արմեն Թովմասյանին (010) 49-43-65, (095) 20-24-95 հեռախոսահամարներով: .

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը կրկին անգամ հղում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը իր հարգանաց հավաստիքը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն,

ք. Երևան, 15 հոկտեմբերի, 2014թ.